



ԵՐԿՈՒԵԱՔԹԻ, 18 ԱՊՐԻԼ, 2016

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՂՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, Կուր ինձ իմաստութիւն Կբարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեա Կիս. եւ ողորմեա քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 106

ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ ԻՐ ԺՈՂՈՎՈՒՐԴԻՆ ՀԱՆԴԵՊ

Օրհնութիւն երգեցէ՛ք Տիրոջ:
 Գոհութիւն յայտնեցէ՛ք Տիրոջ՝ որովհետեւ բարի է,
 որովհետեւ անոր սէրը յաւերժական է:
 Յիշէ՛ զիս, Տէր, երբ հանութիւնդ ցոյց տաս ինձ ժողովուրդիդ,
 օգնէ՛ ինձի, երբ ինձ փրկութեամբդ գաս:
 Որպէսզի ինձ ընտրեալներուդ բարօրութիւնը տեսնեմ,
 մասնակից ըլլամ ընտրած ազգիդ ուրախութեան,
 եւ ինձ գովերգեմ ինձ սեփական ժողովուրդիդ հետ միասին:
 Եգիպտոսի մէջ մեր հայրերը չհասկցան սփանջելի գործերդ,
 մոռցան անչափ բարիքներդ,
 եւ հագիւ թէ ծովը անցած, ամպստամբեցան ինձի դէմ:
 Հակառակ անոր, Տէրը փրկեց զանոնք, որպէսզի իր անունը փառաւորուի,
 եւ անոնք նանչնան իր գորութիւնը:
 Բայց շուտով մոռցան անոր բոլոր ըրածները,
 եւ մտիկ չըրին անոր տուած խորհուրդը:
 Անապատին մէջ ուտելիքի ցանկութեամբ բռնուեցան,
 եւ զԱստուած բարկացուցին ամայի այդ վայրին մէջ:
 Ուստի Տէրը թէպէտ անոնց ուզածը տուաւ,
 սակայն միաժամանակ անոնց վրայ մահացու հարուած բերաւ:
 Կրակ ինկաւ անոնց ամբողջ գունդին մէջ, բոցը այրեց ամբարիշտները:
 Քորեք լեռան ստորոտին հորթի արձան շինեցին,
 եւ ձուլածոյ այդ կուտֆին երկպագութիւն ըրին:
 Իրենց փառքը եղող Աստուածը խոտակեր եգի մը պատկերով փոխարինեցին:
 Մոռցան զԱստուած, իրենց փրկիչը:
 Մտիկ չըրին Տիրոջ ձայնին, այլ՝ իրենց վրաններուն մէջ մնացին եւ տրտնջացին:
 Ուստի Տէրը երդում ըրաւ, որ զանոնք անապատին մէջ պիտի կոտորէ:
 Իրենց գործերով Տիրոջ զայրոյթը գրգռեցին եւ ժանտախտ ինկաւ անոնց մէջ:
 Զբնաջնջեցին Քանաան ապրող ժողովուրդները, ինչպէս Տէրը ըսած էր իրենց:
 այլ՝ անբարոյ կենակցութիւն ունեցան հեթանոսներուն հետ,
 եւ անոնց բարբերը որդեգրեցին:
 Անոնց կուտֆերուն պաշտամուտին նուիրուեցան,
 ինչ որ իրենց կործանումին պատճառ եղաւ:

ՇԱՐԱԿԱՆ - ԱՂՈԹՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:
 Ամենատուրք Երրորդութիւն, տուր աշխաՀիս խաղաղութիւն:
 Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցելոց աղքայութիւն:
 Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղելոց:
 Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՕՐՈՒՄՆ ՆԻՒԹԸ



ԿՈՐՆԹԱՅԻՆԵՐՈՒՄ ՈՒՂՂՈՒՄԾ ԱՌԱՋԻՆ ՆԱՄԱԿԸ (ԳԼԽ 10:1-33)



ԿՈՒՊԱՇՏՈՒԹԵՆԷ ՀԵՌՈՒԲ (10:1-22)

Շարունակելով միաբեր, որպեսզի ռեւել մեկը չզրկուի մրցանակէն, Պօղոս Առաքեալ Հին Կրակարանեան օրինակը կը յիշեցնէ հաւատարմութեան, քաղուած Ելից գիրքէն, թէ ինչպէս «Բոլորն ալ ամալին առաջնորդութեան եւ պահպանութեան փակ էին եւ բոլորն ալ Կարմիր ծովէն անցան, եւ Մովսէսի հետեւելով՝ բոլորն ալ մկրտուեցան ամալին եւ ծովուն մէջ: Բոլորն ալ նոյն հոգեւոր ուրելիքը կերան եւ բոլորն ալ նոյն հոգեւոր ըմպելիքը խմեցին, որովհետեւ խմեցին հոգեւոր ժայռէ մը՝ որ իրենց հետ կ'երթար. եւ այդ ժայռը Քրիստոս ինքն էր» (1-4 հմր):

Եւ ահա այնպէս մը եղաւ, որ «անոնց մեծագոյն մասը հաճելի չեղաւ Աստուծոյ, ուստի անոնց դիակները անապարհին մէջ փարպղնուեցան» (5 հմր):

Ահա թէ ինչո՞ւ անցեալի պարահաճները իբրեւ օրինակ վերցնելու ենք, որպէսզի նոյն վիճակին չմարնուինք, եւ Տէրը այդ բոլորը իբրեւ օրինակ կու փայ գալիք սերունդին: Ինչ էին պարճառները, որ անոնցմէ մեծագոյն մասը հաճելի չեղաւ Աստուծոյ, եւ ուստի չհասան մինչեւ խոստացուած երկիր:

1. Չար բաներու ցանկալ:
2. Կուռքեր պաշտել: «Ժողովուրդը նստաւ, կերաւ ու խմեց, եւ ելաւ պարեց կուռքին առջեւ» (Ելից 32:6):
3. Պոռնկութիւն ընել:
4. Տէրը փորձել, որ կը նշանակէ չհաւատալ, չվստահիլ:
5. Տրամադրել, դժգոհիլ:

Այս բոլորը փրկի ունեցան, ու մանաւանդ՝ արձանագրուեցան «**իբրեւ օրինակ գալիքին եւ իբրեւ ազդարարութիւն**» (11 հմր): Կը նշանակէ եթէ իրենց պարահեցաւ, ուրեմն զգոյշ որ մեզի ալ կրնայ պարահիլ: Յաճախ այնպէս կը կարծենք, որ դէպքերն ու աղէտները միայն ուրիշներու կրնան պարահիլ, մեզի ոչ: Բայց Պօղոս Առաքեալ կը զգուշացնէ արթուն եւ պարաստ ըլլալու, որպէսզի փորձութեան մէջ չիյնանք: Արովհետեւ «**ով որ կը կարծէ թէ կանգուն է՝ թող զգոյշ ըլլայ որ չիյնայ**» (12 հմր): Ոչ որովհետեւ անորոշ ու անվստահ, այլ՝ արթուն եւ պարաստ ըլլալու: Նոյնը պիտի ըսէր քանի մը առիթներով Քրիստոս, «արթուն եւ պարաստ եղէք, որպէսզի փորձութեան մէջ չիյնաք»:

Ապա կ'անցնի փորձութեան փեսակի մասին խօսելու, եւ վստահեցնելու, թէ «**Աստուած թոյլ պիտի չտայ որ ձեր կարողութենէն աւելի փորձուիք, այլ՝ փորձութեան մէջ իսկ ցոյց պիտի տայ զայն յաղթահարելու միջոցը, որպէսզի կարենաք փոկալ**» (13 հմր): Այս ձեռով Աստուած իր ողորմութիւնն է որ ցոյց կու տայ իրեննիներուն, ինչպէս Քրիստոս պիտի աղօթէր եւ խնդրէր Հօրմէն ըսելով. «*Չեմ խնդրեր որ զանոնք աշխարհէն վերցնես, այլ՝ զանոնք Չարէն պահես: Հայր, անոնք որոնք ինձի փոխի՝ կ'ուզես որ ինձի հետ ըլլան՝ ուր որ ըլլամ, որպէսզի փեսնեն իմ փառքս*» (Յովի 17:15, 24):

Այս օրինակները կու փայ Առաքեալը, որպէսզի անով զգուշացնէ Կորնթացիները հեռու մնալու կռապաշտութենէն, որովհետեւ անոր մէջ կը փեսնէ ոչ թէ ուրելն ու խմելը, այլ՝ դեւերուն հաղորդակից ըլլալը: Այնպէս ինչպէս «**խմելով օրհնութեան բաժակէն, Քրիստոսի արեան հաղորդակից կ'ըլլանք: Ճաշակելով հացէն, Քրիստոսի մարմինին հաղորդակից կ'ըլլանք**» (16 հմր), նոյնպէս ալ կուռքերու գոհուածէն ուրելը հաղորդակից կը դարձնէ դեւերուն: Ուստի, «**կարելի չէ Տիրոջ բաժակէն խմել եւ միաժամանակ դեւերու բաժակէն**» (21 հմր): Այս ընելով Աստուծոյ արդար գայրոյթը շարժած կ'ըլլանք (22 հմր): Ուրեմն զգոյշ:

ԱՐՈՐԸ

*Պահապան ամենայնի Քրիստոս,
աշքո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,
ի նստիլ ի տան, ի գնալ ի ճանապարհ,
ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.
եւ ողորմեա՛ք քո արարածոց եւ ինձ բազմամեղիս:*